EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ՉՈՐՐՈՐԴ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ՈՐՈՇՈՒՄ

Գանգատ թիվ 24367/20

«ՌՈՍԳՈՍՍՏՐԱԽ-ԱՐՄԵՆԻԱ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԲԸ-Ն
ընդդեմ Հայաստանի

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Չորրորդ բաժանմունք), 2024 թվականի մարտի 7-ին հանդես գալով Կոմիտեի հետեւյալ կազմով՝

Անյա Սիբերտ Ֆուա [Anja Seibert-Fohr]՝ Նախագահ,

Էն Լուիս Բորմանն [Anne Louise Bormann]

Սեբաստիան Ռադուլեցու [Sebastian Răduleţu]՝ դատավորներ,

եւ Վիկտորիա Մարադուդինա [Viktoriya Maradudina]՝ *Բաժանմունքի քարտուղարի տեղակալի պաշտոնակատար*,

հաշվի առնելով 2020 թվականի հունիսի 9-ին ներկայացված վերոնշյալ գանգատը,

անցկացնելով խորհրդակցություն, որոշեց հետեւյալը.

ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Դիմումատուն՝ «Ռոսգոստրախ-Հայաստան» ապահովագրական ՓԲԸ-ն, մասնավոր ապահովագրական ընկերություն է, որի իրավաբանական հասցեն Երեւանում է: Նրան ներկայացրել է Երեւանում գործող իրավաբան պրն Ն. Յուզբաշյանը:

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով ներկայացված՝ դիմումատու ընկերության բողոքներն առ այն, որ նա զրկվել է դատարանի մատչելիության իրավունքից, քանի որ չի կարողացել Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումն ըստ էության վիճարկել, ուղարկվել են Հայաստանի կառավարություն (Կառավարություն), որը ներակայացրել է գանգատի ընդունելիության եւ ըստ էության քննության վերաբերյալ իր դիտարկումները: Դիտարկումներն ուղարկվել են դիմումատու ընկերության ներկայացուցչին, որին հրավիրել են ի պատասխան ներկայացնելու իր դիտարկումները: Քարտուղարության գրությանը պատասխան չի ստացվել:

Դատարանի էլեկտրոնային հաղորդակցության ծառայության միջոցով ուղարկված 2023 թվականի հունիսի 22-ի գրությամբ դիմումատու ընկերության ներկայացուցիչը ծանուցվել է այն մասին, որ իր դիտարկումների ներկայացման համար թույլատրված ժամկետը լրացել է 2023 թվականի մայիսի 30-ին, եւ որ ժամկետի երկարաձգում չի պահանջվել: Նրա ուշադրությունը հրավիրվել է Կոնվենցիայի 37-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետին, որով նախատեսվում է, որ Դատարանը կարող է գանգատը վարույթ չընդունել, եթե հանգամանքները հանգեցնեն եզրակացության այն մասին, որ դիմումատուն մտադիր չէ հետամուտ լինել գանգատին: Դիմումատու ընկերության ներկայացուցիչն այդ գրությունն ստացել է 2023 թվականի հունիսի 22-ին: Այնուամենայնիվ, սույն գրությունը պատասխան չի ստացել:

ԻՐԱՎՈՒՆՔԸ

Վերոշարադրյալի լույսի ներքո, ինչպես նաեւ Կոնվենցիայով եւ դրա արձանագրություններով երաշխավորված իրավունքների նկատմամբ հարգանքի մասով որեւէ հատուկ հանգամանքի բացակայության դեպքում Դատարանը, համաձայն Կոնվենցիայի 37-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետի, համարում է, որ գանգատի քննությունը շարունակելն այլեւս արդարացված չէ:

Համապատասխանաբար գործը պետք է հանել քննվող գործերի ցուցակից:

Այս հիմնավորմամբ Դատարանը միաձայն՝

Որոշում է գործը հանել քննվող գործերի ցուցակից:

Կատարված է անգլերենով եւ գրավոր ծանուցվել է 2024 թվականի մարտի 28-ին:

Վիկտորիա Մարադուդինա՝ Քարտուղարի տեղակալի պաշտոնակատար	Անյա Սիբերտ Ֆուա՝ Նախագահ